

ՍՏԱՐ ԱՂԱՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ, 11. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂ-
ԲՅՈՒՐՆԵՐ, Բ. ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ. Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ժա-
նրագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, 442 էջ:

Սովետահայ պատմագրության խոշոր նվա-
նումներից մեկն է մեր հարևան ժողովուրդների
միջնադարյան աղբյուրների ուսումնասիրություն-
ներ և նրանցում Հայաստանի վերաբերյալ եղած
նյութերի թարգմանությունն ու հրատարակումը:
Մի բանի տարի է, ինչ ՀՍՍՀ ԳԱ պատմության
և արևելագիտության ինստիտուտները ձեռնա-
մուկ են եղել այդ կարևոր գործին: Արդեն ա-
կադեմիական հրատարակությամբ գիտական
շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ հին
հունական, ասորական, բյուզանդական, արա-
բական, թուրքական և այլ աղբյուրներից: Ա-
ռավել ուշագրություն է դարձվում արևելյան աղ-
բյուրներին, որոնց համակարգում իրենց ուրույն
տեղն ունեն արաբ և արաբալեզու հեղինակների
գործերը: Տակավին VII դարում արաբական
խալիֆայության կազմավորումից հետո, սկսած
VIII—IX դդ., արաբներն լեզվով սկսեցին դրել
ոչ միայն իրենք՝ արաբները, այլև հպատակ
ժողովուրդների պալի մասը՝ պարսիկները,
ասորիները, քրդերը, ասիական և աֆրիկյան
շատ ժողովուրդներ, ինչպես նաև առանձին հայ
(արաբացած) հեղինակներ: Միջին դարերում
արաբները դարձավ ոչ միայն պալատական լե-
զու, այլև ժամանակի մահմեդական աշխարհի
հոգևոր մշակույթի, գիտության հիմնական լե-
զու: Ելնելով ռազմաքաղաքական և տնտեսա-
կան նպատակներից, արաբական խալիֆայու-
թյունում չափազանց կարևորություն տրվեց նաև
աշխարհագրությանը և պատմությանը, որոնք
մոտավորապես VIII դարից իրենց նախնական
զարգացումը սկսեցին պատմական դրույցներից
և հարկային մատյանների նյութերից: IX դա-
րից սկսած արաբներն գրվեցին հարյուրավոր
գործեր, որոնց հեղինակները (արաբ և այլ ծա-
ղում ունեցող) տալիս են ոչ միայն նվաճում-
ների և խալիֆայության ներքին ու արտաքին
հարաբերությունների պատմությունը, այլև մերթ
ընդ մերթ անդրադառնում են հպատակ ժողո-
վուրդների անցյալին, ծագումնաբանությանը և

աւարբեր երկրների աշխարհագրական և վար-
չատերիտորիալ բաժանումների նկարագրությա-
նը: Այս իմաստով էլ արաբական միջնադարյան
աղբյուրները ուշագրավ են և աչքի են ընկնում
ոչ միայն իրենց քանակով, այլև տեղեկությու-
նների արժեքով և հարցերի բազմազանությամբ:

Հայաստանը և հայ ժողովուրդը առանձնահա-
տուկ տեղ են զբաղեցրել արաբ միջնադարյան
պատմագրության էջերում: Սկսած վաղ շրջանի
հեղինակներից, արաբ պատմիչների և աշխար-
հագիրների երկերում Հայաստանի («Արմինիա-
յի») մասին տեղ են դրել հետաքրքրական տե-
ղեկություններ: Դրանք վերաբերում են արաբ-
ների կողմից Հայաստանի նվաճմանը, հայերի
հերոսական պայքարին, հարևան ժողովուրդնե-
րի հետ ունեցած փոխհարաբերություններին,
ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի նկարա-
գրությանը: Այդ նյութերի զգալի մասը կարող
է լրացնել հայ հեղինակների հաղորդումները:
Զկա մի հեղինակ (հատկապես արևելյան խա-
լիֆայության շրջանի), որի աշխատության մեջ
Հայաստանի վերաբերյալ չլինեն մեկ կամ մի
բանի, շատ հաճախ ընդարձակ վկայություններ:

Միջնադարյան արաբ հեղինակների տեղեկու-
թյունները հայ մտավորականությանը ներկա-
յացնելու շնորհակալ աշխատանքը սկսվել է ոչ
վաղուց: Դեռևս 1965 թ. արաբագետ Հ. Նալ-
բուհյանի թարգմանությամբ և ծանոթագրու-
թյուններով կատարվեց առաջին լուրջ փորձը:
Երևանում լույս տեսավ «Արաբական աղբյուր-
ները Հայաստանի և հարևան երկրների մա-
սին» ստվարածավալ հատորը, որի մեջ տեղ
դրան XIII դարի հեղինակներ Յակուբ ալ-Հա-
մաուդի, Արուս-Ֆիդայի և Իբն Շադադի վկայու-
թյունները: Տարիներ անց հայ արաբագետները
հարկ համարեցին դարձյալ անդրադառնալ արա-
բական աղբյուրներին:

1981 թ. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը
լույս ընծայեց կրկին XIII դարի հանրահռչակ

պատմիչ Իբն ալ-Ասիրի տեղեկությունները Հայաստանի մասին («Արաբական աղբյուրներ» մատենաշարի երկրորդ հատորը): Այն բնագրից հայերեն է թարգմանել, առաջաբանն ու ծանոթագրությունները գրել ՀՄՄՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի աղբյուրագիտական խմբի ղեկավար հայագետ-արաբագետ, պատմական գիտությունների դոկտոր Արամ Տեր-Ղեզնդյանը:

Տարիներ շարունակ Ա. Տեր-Ղեզնդյանը պլուրալիստ է կատարում Հայաստանի VII—IX դդ. պատմության ուսումնասիրման բնագավառում: Բնականաբար, նա օգտվել է նաև արաբական աղբյուրներից, որոնց հիման վրա էլ լուսաբանել է նշված ժամանակաշրջանի Հայաստանի, հայ-արաբական փոխհարաբերությունների պատմության կնճռոտ հարցերը: Իբն ալ-Ասիրը միջնադարյան պատմագրության մեջ պատվավոր տեղ է գրավել իր բազմահատորանոց «ալ-Քամիլ ֆի-լ-Տարիխ» («Արևելատար պատմություն») աշխատությամբ: Այն շարադրելու համար Իբն ալ-Ասիրը օգտագործել է ժամանակի գրությունները, միջնադարյան ավանդությունները և իր նախորդների գրքերը: Իսկ X դարի հայտնի պատմիչ աթ-Թաբարու բազմահատորանոց պատմությունը ոչ միայն նրա հիմնական սկզբնաղբյուրն է եղել (մինչև X դարը), այլև շարադրանքի հիմնաքարը և ուղեցույցը, մի բան, որը Իբն ալ-Ասիրը խոստովանում է իր երկի առաջաբանում: Ինչպես միջնադարյան մահմեդական շատ ժամանակագիրներ, այնպես էլ Իբն ալ-Ասիրը իր աշխատությունը ավսել է արարչագործությունից (Աստվածաշնչի նյութերի հիման վրա) մինչև իր օրերը՝ XIII դարի առաջին երեսնամյակը:

Նրա աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է շատ ժողովուրդների միջնադարյան ռազմաքաղաքական պատմության հետազոտման համար: Այն շատ է օգտագործվել արևելագետների կողմից, նրանից առանձին ժամանակաշրջանների և երկրների մասին քաղվածքներ են թարգմանվել տարբեր լեզուներով: Խիստ հետաքրքրական են Իբն ալ-Ասիրի վկայությունները VII—XIII դդ. Հայաստանի վերաբերյալ: Վերին Միջագետքում ծնված լինելով (1160—1233 թթ.) նա, պետք է ենթադրել, որ քաջատեղյակ է եղել Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, շփվել հայերի հետ:

Այդ նյութերի թարգմանության կարիքը վաղուց էր զգացվում: Չնայած 1919 թ. Վիննաչուֆ Բ. Խալաթյանցը փոքրիկ հատվածներ թարգմանեց հայերեն, սակայն հայագետները հաճախ օգտվում էին Պ. Ժուզեի կողմից

1940 թ. Բաքվում լույս տեսած Ատրպատականի մասին թարգմանված քաղվածքներից:

Հայերեն հրատարակված հատորում տեղ են գտել հատվածներ Իբն ալ-Ասիրի «Արևելատար պատմությունից» (գերակշռող մասը) և «Տարիխ ադ-Դաուլա ալ-Աթաբիբիյա Մուլուք ալ-Մաուսիլ» («Պատմություն Մոսուլի Աթաբեկների պատմության») երկից: Հատորը բացվում է Ա. Տեր-Ղեզնդյանի «Արաբ պատմագրությունը և Իբն ալ-Ասիրը» ընդարձակ առաջաբանով: Հեղինակը խոսում է արաբական պատմագրության ձևավորման և զարգացման փուլերի մասին: Այնուհետև հակիրճ անդրադառնում է Իբն ալ-Ասիրի կյանքին և գործունեությանը՝ հիմնական ուղադրությունը կենտրոնացնելով նրա «Արևելատար պատմություն» երկի բովանդակության և սկզբնաղբյուրների վրա: Առաջաբանում ամփոփ խոսք կա արաբական խալիֆայության ռազմաքաղաքական վիճակի, կենտրոնախույս ուժերի պայքարի, մահմեդական դինաստիաների գործունեության, ինչպես նաև VII—XIII դդ. Հայաստանի քաղաքական իրադրության և այդ ժամանակաշրջաններին վերաբերող Իբն ալ-Ասիրի հաղորդած տեղեկությունների մասին:

Սակայն գրքի արժանիքն այն է, որ թարգմանաբար գիտական շրջանառության մեջ են դրվել Հայաստանին և հայերին վերաբերող հատվածներ արևելյան այդ կարևոր սկզբնաղբյուրից: Հատորում տեղ են գտել նաև նյութեր Հայաստանի դրացի երկրների (Վիրք, Սղվանք, Շիրվան, Դերբենդ, Ատրպատական, Վերին Միջագետք, Ասորիք և Փոքր Ասիա) պատմության վերաբերյալ:

Թարգմանությունը կատարվել է 1934—1935 թթ. Կահիրեում ստվարածավալ 9 հատորներով լույս տեսած Իբն ալ-Ասիրի «Արևելատար պատմությունից», որը կազմում է գրքի հիմնական մասը (էջ 37—346): Այն համեմատվել է Իբն ալ-Ասիրի Կ. Թորենբերգի կողմից 1851—1876 թթ. լեյզենում 14 հատորով լույս տեսած գիտական հրատարակության նույն աշխատության արաբերեն բնագրի հետ: Բացի այդ, Ա. Տեր-Ղեզնդյանը հատորի վերջում փոքրիկ քաղվածքներ է մեջբերել Իբն ալ-Ասիրի 1876 թ. Փարիզում հրատարակված «Պատմություն Մոսուլի աթաբեկների պատմության» գրքից (էջ 349—363):

Ամենից առաջ պետք է նշել, որ թարգմանությունը կատարվել է խնամքով, հեղինակը հիմնականում հավատարիմ է մնացել բնագրին: Սակայն որոշ ձևակերպումներ արվել են ոչ այնքան մատչելի լեզվով: Անհրաժեշտ է ընդգծել, որ միջնադարյան արաբական պոեզիան, պատմությունը, գրականությունը իրենց լեզ-

վամտածողության մի զանազանում են Արևելքի ժողովուրդների ստեղծագործություններից: Մի հանգամանք, որը հաճախ մասնագետներին պիտի է դժվարեցրել կացություն մեջ:

Հատորը սկսվում է Նոյի և Նրա սերնդի մասին Աստվածաշնչի արարական վարկածից: Այնուհետև մի քանի կարճ հիշատակություններ վերաբերում են III դարում Սասանյան Իրանի և Արշակունիների հարաբերություններին: Շարաբանքի դրախտի մասը սկսվում է արարական նվաճումներից (637 թ.): Եղած Նյութլեդո, որոնք տրված են Իրն այ-Ասիրի պատմության ժամանակագրական կարգով, և որն են ընդհանրվում են մեկ կամ մի քանի տարով և միշտ չէ, որ արտացոլում են դեպքերի և իրադարձությունների ամբողջական նկարագրությունը: Մի քանի դարաշրջանների (VII դարի 30-ական թթ.—XIII դարի առաջին կեսին) վերաբերող այդ անվանությունները պատմության ընդգրկում են ուսուցարարական անցումների պատմությունը թե՛ Հայաստանում և թե՛ հարևան երկրներում: Հատորում մասնավորապես ընդգրկվում են հայ-արարական փոխհարաբերություններին վերաբերող տվյալները: Դրա հետ մեկտեղ խիստ ուշադրով են նաև Իրն այ-Ասիրի վկայությունները X—XIII դդ. հատարական-բաղադրական իրավիճակի, հայ թագավորների, իշխանների դրոշմանությունների և մասնագետական զանազան պատմությունների հետ ունեցած հարաբերությունների, սելջուկների, թաթարների ասիատականությունների և բաղամիջով այլ հարցերի մասին: Իրն այ-Ասիրը արաբական պատմագրության մեջ ընդունված ձևով խոսում է Հայաստանի պատմության այն շրջանների մասին, երբ երկիրը բաղադրական հարաբերություններ ունեցել է մասնագետական պետությունների հետ: VII դարում Նրան հետաքրքրում են արաբական նվաճումները, որոնք շարունակվեցին մինչև 654 թ.: Դրանից հետո նա լուր է Հայաստանում կատարվող այն դեպքերի մասին, որոնք նկարագրված են Սերեռուի ու Ղևոնդի մոտ: Ասիա կրկին անդրադառնում է VII դարի վերջի և VIII դարի սկզբի արաբական նվաճումներին: VIII դարի առաջին կեսի վերաբերյալ նա հիշում է արաբա-բյուզանդական և հատկապես արաբա-խաղարական պատերազմները, սակայն ոչ մի խոսք 747—750 թթ. Հայաստանում ծագած ապստամբության մասին: Հայոց իշխաններից հիշվում է Տաճատ Անձևացին (Թադադ այ-Արմանի), որը կոչվել էր նախկինում խալիֆայության դեմ և ապա անցել արաբների կողմը՝ դառնալով Հայոց իշխան կամ պատրիկ:

IX դարի առաջին կեսի բուն իրադարձությունները՝ Բագրատունյաց հզորացումը, Աշոտ

Մսակեր Բագրատունու բարձրացումը և այլն Իրն այ-Ասիրի տեսադաշտից դուրս են մնացել: սակայն 850—852 թթ. հուլիսի ապստամբությունը մասնաձև են նկարագրում, հիշելով իշխանաց իշխանի՝ Բագրատ Բագրատունու գերությունը, խաթեցիների հարձակումը, Յուսուֆ ոստիկանի սպանությունը և այլն: Իրն այ-Ասիրին հետաքրքրում են Բագրատունյաց թագավորության պատմության այն շրջանները, երբ Հայաստանն ընդհարումներ է ունենում դրացի մասնագետական ամիրանների հետ: Օրինակ՝ Լաշքարի կոչված դրավարը 937 թ. Ատրպատականից ներխուժեց Հայաստան, մեծ վնասներ պատճառելով: Վասպուրականում: Նրա դեմ դուրս եկավ Անձևացյաց Գուրգեն իշխանի որդի Ատոմը (Աթում այ-Արմանի) և սպանեց նրան: X դարի երկրորդ կեսից մինչև սելջուկների արշավանքները Իրն այ-Ասիրը լիակատար լուրջ է պահպանում, բանի որ Հայոց թագավորությունը անկախ, հզոր պետություն էր ու ոչ մի մասնագետական ամիրայություն չէր կարող սպառնալ նրան: Սակայն սելջուկյան արշավանքների և հատկապես Անիի զբաղման մասին արդեն մանրամասն է պատմում: Հատուկ տեղ են դրադեցնում Հյուսիսային Հայաստանի Զաքարյան իշխանության և վրացական դորեների ու խաթեի հաճ Արմանների միջև ընդհարումների մանրամասնությունները: Վերջապես, նա գրում է կիլիկիայի հայկական թագավորության և Ասորիքի մասնագետական ամիրանների ու խաչակիրների փոխհարաբերությունների մասին:

Այսպիսով, Իրն այ-Ասիրը և հայկական աղբյուրները լրացնում են իրար և կամ նույն դեպքի մասին տալիս են տարբեր, բայց միմյանց լրացնող մանրամասներ:

Վերջապես անհրաժեշտ է ընդգծել, որ Իրն այ-Ասիրի վկայակոչությունները, որոնք անկասկած, հետաքրքիր են, և որոնց զգալի մասը նորություն է հայագետների և արաբագետների համար, այնուամենայնիվ ընկելու, ուսումնասիրվելու, հայկական և հարևան ժողովուրդների աղբյուրների հետ համեմատվելու կարիք ունեն: Մի բան, որ չի արվել Ա. Տեր-Ղևոնդյանի կողմից:

Գրքի ծանոթագրությունների բաժնում Ա. Տեր-Ղևոնդյանը բացատրում է տեքստի մեջ եղած միջնադարյան արաբական հարկային և ֆեոդալական հարաբերություններին վերաբերող տերմինները, տալիս է տեղանունների, անձնանունների արաբական ու հայկական ձևերը և այլն: Ցանկալի էր, որ հատորի վերջում բովանդակության մեջ հիշվեին բոլոր թվական-

ները, որոնցից հետո տրված են վերնագրերը: Դա կհեշտացնեն գրքի ընթերցումը և տեղեկությունների որոնումը: Հատորն ունի ուսանողների ընդարձակ ամփոփում, համառոտագրություն-

ների, անձնանունների, տեղանունների, ցեղանունների, առարկայական ցանկեր:

Ա. Պ. ՓՈԼԱՒՅԱՆ

DEFTER-İ CABA-İ EYALET-İ ÇİLDİR-1694—1732 yy.

ՉԼԿԸՐԻ ԷՅԱԼԵԹԻ ԶՕՔՍ ԳՍՖԹԱՐԸ. Թուրքերեն բնագիրը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ հանդերձ, հրատարակության պատրաստեց Մ. Խ. Սվանիձեն. Թբիլիսի, 1979:

Վերջին տասնամյակներում վրաց արևելագիտությունը մեծ ուղադրություն են դարձնում XVI—XVIII դդ. թուրքական պաշտոնական վավերագրերի վերծանման ու հրատարակման գործին: Հրատարակված աշխատությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1947 թ. Թբիլիսիում լույս տեսած «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարը (գրանցման մատյանը)»¹: Դաֆթարներ էին կազմում Օսմանյան կայսրության (ինչպես նաև այլ արևելյան երկրներում) կառավարության հրամանով պարբերաբար հատուկ հաշվառման (tahrir) միջոցով կառավարող գրանցման մատյանները: Դաֆթարների հսկայական գիտական նշանակությունը բազմիցս ընդգծել են թուրք ու եվրոպացի համայնքային բոլոր արևելագետ թուրքագետները: Եթե նրանք զիտական հասարակայնությունը հայտնի դառնա թուրքական պետական արխիվներում առարկայական պահպանված Արևմտյան Հայաստանի նահանգներին ու գավառներին վերաբերող դաֆթարների բովանդակությունը, ապա շատ հարցեր կլուսաբանվեն նորովի:

«Զլդրի էյալեթի ջարա դաֆթարի» մեջ առաջին անգամ տրվում են Ախալցխայի փաշայությունից թուրքական պետական հաշվառումը (անեստրը), վավերագրերի վրացերեն թարգմանությունը ժանտվագրություններով ու առաջորանով: Բուն վավերագիրը գտնվում է Մոֆիայում, Կիրիլի ու Մեֆոյի անվան ժողովրդական գրադարանի արևելյան բաժնում: Անհրաժեշտ է նշել, որ XVI—XVIII դդ. վերաբերող գրանցման այլ մատյաններ ևս, ինչպես պարզվում է Զլդրի էյալեթի սույն դաֆ-

թարից և բուլղար թուրքականների բազմաթիվ աշխատություններից, պահվում են վերահայրադարանում: Ժամանակն է, որ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան նույնպես ձեռնամուխ լինի այդ գործին: Մեղանում առայժմ, եթե նրկայի շունհանը Հ. Գ. Փափազյանի հրատարակած «1725—1728 թթ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկամատյանները» վավերագրերը, փաստորեն այլ աշխատություն հրատարակի վրա գոյություն չունի: Անկարայի և Ստամբուլի պետական արխիվներում ներկայումս պահվում են 254 ընդարձակ (defter-i muhtassa) և 116 համառոտ (defter-i muhtasar) դաֆթարներ: Ենթադրվում է, որ դաֆթարներ պահպանվել են նաև եվրոպական երկրներում, մասնավորապես Բալկաններում:

Զլդրի էյալեթի ջարա (ջարա արաբերան նշանակում է հարկ, հարկերի գանձում) դաֆթարը պարունակում է նաև կարմի և Տրապիզոնի գրանցման մատյանները: «Ջարա դաֆթարում» իրենց արտահայտությունն են գտել Զլդրի էյալեթում աղաների՝ խասսերի, զեմեթների ու թիմարների բաշխման մասին համապատասխան վիլայությունների Վերջինները նշված են հականի հանվանի: Դաֆթարը գրանցված է ժամանակագրական կարգով՝ 1694 թ. սկսած մինչև 1732 թ.:

«Դաֆթար-ի ջարա»-ն աղբյուր է ոչ միայն Զլդրի էյալեթի, այլև ողջ կայսրության, ներառյալ նաև Արևմտյան Հայաստանի, ավատատիրական հարաբերությունների ուսումնասիրության համար: Այստեղ արձանագրված են 17 խասսեր (խասսերից ստացված տարեկան եկամուտը կազմում էր 100000 ալլե և ալլեի²), 90 զեմեթներ (զեմեթի տարեկան եկամուտը աղատատիրոջ օգտին կազմում էր 20 հազարից

¹ Пространный реестр Гюрджистанского вилайета. Турецкий текст издан, перевел, исследован и комментариями снабдил С. С. Дзякия. Кн. I, текст. Тбилиси, 1947. Ներկայումս Մ. Խ. Ջիկիան հրատարակության է պատրաստում «1727 թ. Կարթլիի վիլայեթի ընդարձակ դաֆթարը»:

² Ալլե (akçe) թուրքական արծաթ դրամի միավոր է: Ալլե հայերեն նշանակում է սպիտակ: Առաջին օսմանյան ալլեները կշռում էին բոլորք մաքսալ (1,2 գր. արծաթ):